

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՏ
ՉԱՎԱՐՏՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ.
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԱՄՊԵԿՏ**

Մ.Ա. Հարությունյան
փիլիսոփայական գիտությունների թեկնածու

Որո՞նք են մերօրյա Հայաստանի արդիականացման, նորացումային փոխակերպման հիմնական ինստիտուցիոնալ ու սոցիոմշակութային խոչընդոտները և ինչպե՞ս պետք է հաղթահարվեն դրանք. ինքնաբերաբար քարշ գալով իրադարձությունների ետևի՞ց, թե՞ ակտիվորեն մասնակցելով պետականության ամրակայման ռազմավարական նոր նախագծի ձևավորմանը: Ի՞նչ գործոնների և մեխանիզմների շնորհիվ կարելի է դուրս գալ ստեղծված փակուղային վիճակից, ապահովել Հայաստանի կայուն զարգացումը, որը ոչ մի ընդհանուր բան չունի ներկայիս լծացման հետ:

Երկրի օրակարգում դրված են սկզբունքային հիմնահարցեր, որոնք հրամայաբար պահանջում են Հայաստանի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական հարաբերությունների ողջ համակարգի համակարգային արդիականացում, ինչն անհնար է առանց ավտորիտարիզմի, բյուրոկրատիզմի, կոռուպցիայի, իրավական ցիիլիզմի և, այսպես կոչված, կլիենտելիզմի, կլանայնության պետականակործան մեխանիզմներն արմատախիլ անելու:

Ժամանակակից ամերիկացի քաղաքագետներից Խուան Լինցը ավտորիտար կառավարման էական գծերը տեսնում է նրանում, որ «կառավարող խումբը» «պատասխանատվություն չի կրում ոչ մի ընտրովի մարմնի առաջ և չի կարող զրկվել իշխանությունից ինստիտուցիոնալ խաղաղ միջոցներով»: ¹ Սոտավորապես նույն կերպ է ավտորիտար վարչակարգը բնութագրում նաև ֆրանսիացի անվանի քաղաքագետ Ռ. Արոնը: ²

Ավտորիտար կառավարման ուղին կապված է համակարգային ռիսկերի հետ: Նախ, այդ ուղին ելնում է այն կարծեցյալ առաջադրույթից, որ ազգային բարեփոխումների «դեմիուրգ-արարիչները» օժտված են երկրի առաջ ծառայած բոլոր պրոբլեմները լուծելու մենաշնորհով:

¹ Линц Х. Авторитаризм и демократия в "третьем мире". М., 1991, стр. 146.

² Арон Р. Демократия и тоталитаризм. М., 1993, стр. 78-79.

Աստօժ փոխանորդ կարգվելու մեծամոլիկ հավակնությունը՝ ազգավտանգ ամբարտավանության արդյունք է, իսկ բանական ողջախոհության տեսանկյունից նման մոտեցումը զուրկ է տեսական-մեթոդաբանական հիմքերից: Երկրորդ, ավտորիտարիզմն անխուսափելիորեն կազմաքանդում է հակադարձ կապերը, աղավաղում է «ներքևից» եկող ազդանշան-ուղեործները գործերի իրական վիճակի մասին: Կառավարումը դառնում է անբովանդակ, ինչը հանգեցնում է պետության և հասարակության փոխօտարման խորացմանը: Հակադարձ կապերը, ընդհակառակը, նվազեցնում են սխալով իդի կառավարչական ռիսկերը, ստեղծում են նախադրյալներ արդիականացման խնդիրների սրբագրման, շտկման համար: Կործանարար է իշխանության գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողության ու նախաձեռնության սահմանափակման ձգտումը: Այսօր, երբ քաղաքական սուբյեկտների ակտիվության և ինքնուրույնության մակարդակի բարձրացումը դարձել է օրվա հրամայականը, ավտորիտարիզմն ունակ է կործանելու նույնիսկ սկզբնապես զրավիչ արդիականացման նախագիծը:

Երրորդ, մենք գտնում ենք, որ խոշոր սխալ կլիներ ավտորիտարիզմի մեջ տեսնել քաղաքական մոբիլիզացիայի զորեղ գործոն՝ անտեսելով դրա հետևանքները: Ավտորիտարիզմը նման է թմրանյութի, որը ժամանակավորապես դիմագրավելով հասարակության քայքայմանը, իրականում չի վերացնում ճգնաժամային երևույթների իսկական պատճառները: Այսինքն՝ «չառողջացնելով» ինստիտուցիոնալ միջավայրը, այն հակասություններն, իսկն ասած, արտամղում է դեպի խորքերը, որն էլ ավելի է ակտիվացնում սոցիալ-տնտեսական լարվածության աճի, հետևաբար արդիականացման ներուժի քայքայման գործընթացները:

Ավտորիտարիզմի հետ սերտորեն կապված է նաև բյուրոկրատիան՝ նախագահական կառավարման գլխավոր հենարանը: Անցած տարիներին նախագահ Ս.Սարգսյանին այդպես էլ չհաջողվեց կերպարանափոխել հայկական բյուրոկրատիան. այն եղել ու մնում է էսամոլ և շահատենչ քաղաքական ձգտումների կրողը: Ամբողջությամբ Հայաստանը մնում է որպես ոչ այնքան «կառավարվող», որքան «չափազանց կառավարվող» ժողովրդավարության ցայտուն օրինակ: Այն արտացոլում է Հայաստանում իշխանության վերարտադրության տրամաբանությունը և ժողովրդավարական ինստիտուտների օգտագործման

ավտորիտար-բյուրոկրատական եղանակը՝ իշխանության մենաշնորհը պահպանելու նպատակով: Ավտորիտար իշխանությունը և բյուրոկրատիան Հայաստանում կարծես թե հետապնդում են երկակի նպատակ. նրանք խոսքով դեմ չեն շուկայական տնտեսության և ժողովրդավարության զարգացմանը, անգամ պատրաստ են դա խրախուսել, սակայն պատրաստ չեն հրաժարվել իշխելու հնարավորությունից: Պատրաստ չեն ընդունել այնպիսի որոշումներ, որոնք պահանջում են սահմանափակել նոմենկլատուրային բյուրոկրատիայի քաղաքական տիրապետման հնարավորությունները կամ անձնական (խմբային) շահերը՝ հանուն երկրի «ներքևից» արդիականացման: Վերածնակերպելով ՌԴ նախկին նախագահ Դ.Սեդվեդկի խոսքերը՝ կարելի է ասել, որ հայկական բյուրոկրատիան ևս պարբերաբար ցնցումնահարում է քիզնեսը, որպեսզի այն չանի ինչ-որ բան «ոչ այնպես»: Նաև ձգտում է վերահսկողություն հաստատել ՉԼՄ-ների վրա, որպեսզի չասեն այն, ինչը չի կարելի ասել, միջամտում է ընտրական գործընթացներին, որպեսզի չընտրեն նրանց, ում չպետք է ընտրեն, ճնշում է գործադրում դատարանների վրա, որպեսզի հանկարծ չդատապարտեն նրանց, ում չպետք է դատապարտեն: Այլ կերպ ասած՝ պետական ապարատը և՛ ամենամեծ աշխատատուն է, և՛ ամենաակտիվ հրատարակիչը, և՛ չավագույն պրոդյուսերը: Ամենազոր բյուրոկրատիան ստեղծում է ոչ միայն կոռուպցիա, այլև ծնում է զանգվածային իրավական միհիլիզմ:¹

Որո՞նք են հայկական բյուրոկրատիայի բնորոշ գծերը: Նախ՝ ի տարբերություն վերերյան բյուրոկրատական ինստիտուտների, որոնք ունեն անանձնական, գործառութային ուղղվածություն, Հայաստանում բյուրոկրատական ինստիտուտները ծայրեծայր հագեցած են մարդկային հարաբերություններով, անձնական կապերով, շահերի շղթաներով, որոնք ներթափանցում են հասարակական կյանքի բոլոր ոլորտները, նախևառաջ՝ պետության և քիզնեսի, գործադիր և դատական իշխանությունների ոլորտները: Ուստի զարմանալի չէ, որ այսօր Հայաստանում արդարադատության գլխավոր պրոբլեմը ոչ թե սովորական կոռուպցիան է, այլ դատավորների մեծ կախվածությունը պաշտոնյաներից, նրանց շրջանակներում գործող ոչ ֆորմալ կապերի ցանցերից:

¹Послание Президента Российской Федерации Д.А.Медведева Федеральному Собранию Российской Федерации, Москва, 5 ноября 2008г.

Երկրորդ, տպավորությունն այն է, որ մեզանում օրենքը և «արդարադատությունը» կարծես թե դարձել են ոմանց քաղաքական կարիերայի, փառասիրության կամ նույնիսկ վրեժխնդրության «ամենաարդյունավետ» գործիքը: Ըստ երևույթին, չկա այնպիսի վիճազություն, որը ցույց տար, թե բյուրոկրատական ապարատի վերին օղակների արտաքին ցուցափեղկերի ետևում ինչպիսի «փոխշահավետ» գործարքներ են կնքվում, թե ինչպես են ծրագրվում հասարակական մեծ հնչեղություն ունեցող դատավարությունները կամ պատգամավորների «քաղաքական կամքը» և թե ովքեր են այդ անդրկուլիսյան գործարքների իսկական պատվիրատուները: Կամ թե, ի վերջո, ով է ռեժիսորն ու անդրկուլիսյան խաղերի այն վարպետը, որը յուրացրել է ստվերում մնալու արվեստը, ո՞վ է, որ երևութապես դուրս է մնում հասարակական տեսանելիությունից, սակայն վստահաբար զբաղեցնում է պետկառավարման համակարգի «գորշ կարդինալի» գաղտնադիրքը:

Կոռուպցիան հայկական բյուրոկրատիայի յուրօրինակ քաղաքական ստվերն է, նրա խմբային շահերի ցայտուն դրսևորումը: Կոռուպցիան չի կարող լինել առանց բյուրոկրատիայի, ինչպես և բյուրոկրատիան՝ առանց կոռուպցիայի:

Ասում են, թե լինում է ազգային բյուրոկրատիա, որը պատասխանատվությամբ է կատարում իր գործառույթները: Սակայն արգասաբեր բյուրոկրատիան հնարավոր է որպես կառավարման ապարատ, որը մշտապես վերահսկվում է հասարակության կողմից և ծառայում նրան: Դետիտորիդային հայկական բյուրոկրատիան իր համար վարդուց է հայտնագործել թույլ պետականության «անդիմադրելի հմայքը»: Նա ձգտում է ստեղծել քաղաքական ներկայացվածության պատրանք՝ իրականում սահմանափակելով բնակչության մեծամասնության շահերի և կարծիքների լիարժեք ներկայացվածությունը: Դայաստանում «կառավարվող ժողովրդավարության» մոդելը տնտեսական և քաղաքական ընտրանում պատնեշավորել է քաղաքացիների օրինական հավակնություններից և պահանջներից: Դենց ժողովրդի հիմնարար պահանջումըների նկատմամբ քամահրական վերաբերմունքն է Դայաստանի քաղաքական համակարգի առավել խոցելի կողմը: Պատահական չէ, որ օրինականության և անկախ արդարադատության վերաբերյալ պաշտոնական հայտարարությունները մնում են մերկախոս դեկլարացիաներ, որոնք ամրապնդված չեն գործով:

Հայաստանում կոռուպցիան ունի համակարգային բնույթ: Ըստ էության, քաղաքական կոռուպցիայի հարցը Հայաստանի զարգացման կամ արդիականացման քաղաքականության գլխավոր պրոբլեմն է: Պետք է ասել, որ «սովորական կոռուպցիայի» և քաղաքական կոռուպցիայի միջև խիստ որոշակի սահման չկա: Թերևս կարելի է ասել, որ այս երկուսի միջև «չինական պարիսպ» չկա: Պետական պաշտոն զբաղեցնող անձի կողմից իրեն վստահված պետական-իշխանական լիազորությունների և իրավունքների, պետիշխանության համակարգում ծառայողական դրության, կարգավիճակի, պետական իշխանության օգտագործումը անձնական կամ՝ խմբային նպատակներով (այդ թվում՝ երրորդ անձանց օգտին), հակաիրավական եղանակով քաղաքական օգուտներ քաղելը ոչ այլ ինչ է, քան կոռուպցիայի առանձնահատուկ տեսակ՝ քաղաքական կոռուպցիա: Այսպիսով քաղաքական կոռուպցիայի հիմքը, նախևառաջ, պետական իշխանության վարչական ռեսուրսի ապօրինի օգտագործում-չարաշահումն է:

Ի դեպ, քաղաքական կոռուպցիան, որ ընդգրկում է պետական իշխանության և կառավարման համակարգի վերին ոլորտը, բնութագրելու համար Արևմուտքում օգտագործվում է «state capture» տերմինը, որի իմաստային թարգմանությունը նշանակում է «պետության գնում»: Խսքն այն մասին է, երբ բարձրաստիճան պաշտոնյաները՝ անօրինական և ոչ թափանցիկ «պարզևավճարների» դիմաց ընդունում են ֆիրմաների համար նպաստավոր «խաղի կանոններ» (օրենքներ, որոշումներ, հրահանգներ և այլն): Այլ կերպ ասած՝ պաշտոնատար անձանց կաշառելու միջոցով «գնում են պետությունը», որպեսզի վերջիններս խոշորագույն գործարարների, օլիգարխների համար ձևավորեն նրանց ձեռնտու իրավական, քաղաքական «կարգավորված միջավայր»՝ մնացած տնտեսության հաշվին կենտրոնացված ռենտա ստանալու նպատակով:

Քաղաքական կոռուպցիայի ավարտուն ձևը պետության վերջնական «զավթումն» է, երբ պետական իշխանությունը յուրօրինակ ձևով սեփականաշնորհվում է ազդեցիկ քաղաքական-տնտեսական խմբավորումների կողմից: Այդ դեպքում իշխանական-հարկադրական լիազորությունները և պետական իշխանության վարչական ռեսուրսներն օգտագործվում են բնական ռեսուրսները, հիմնական ֆինանսական հոսքերը, պետական և մասնավոր սեփականությունը, առավել ազդե-

ցիկ ՁԼՍ-ները վերահսկելու և դրա միջոցով «կառավարող դասակարգի» հարստությունը բազմապատկելու նպատակով:

Այսպիսով, քաղաքական կոռուպցիան նախ՝ գործառու է որպես ռեսուրսների ռենտայի և սոցիալական կարգավիճակների վերաբաշխման մեխանիզմ ոչ միայն իշխանության և բիզնեսի, այլև տարբեր սոցիալական խմբերի միջև: Դա նշանակում է, որ փողի օգնությամբ կարելի է ձեռք բերել պետական աջակցություն, լրացուցիչ մրցակցային հնարավորություններ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Երկրորդ, կոռուպցիան վերածվել է երկրի «քաղաքական դասակարգի» կառավարող ընտրանու մեջ մտնող ազդեցիկ խմբերի հարաբերությունները պարզելու յուրօրինակ հրապարակի, որտեղ բանավեճերը և կոնֆլիկտները հիմնականում ծավալվում են տնտեսական և քաղաքական կառուցվածքների, այլ ոչ թե կոռուպցիայի բուն էության շուրջը: Վերջապես, չնոռանանք, որ կոռուպցիան նաև յուրահատուկ ոչ ֆորմալ հասարակական դաշինքի տարրերից է: Օրենքը շրջանցելու կամ «փող տալով ազատվելու» հնարավորությունը հաճախ հարուցում է իշխանության գործերին «չմիջամտելու»՝ որոշ խավերի պասիվ, ինչ-որ իմաստով, օտարված ապաքաղաքական կեցվածքը:

Այստեղ մեր խնդիրը ոչ թե կոռուպցիայի ծավալուն գնահատական տալն է, այլ արդիականացման ինստիտուցիոնալ խոչընդոտների բացահայտումը:

Ինչի՞ց են գլխավորապես դժգոհ Գայաստանի շարքային քաղաքացիները: Նախևառաջ՝ կրթության ոլորտի, ոստիկանության և դատական համակարգի կոռումպացվածությունից: Այնինչ Transparency International (TI) միջազգային կազմակերպության հայկական գրասենյակի տնօրենին զարմացրել է այն փաստը, որ 2009թ. անցկացված հարցման արդյունքներով, հարցված քաղաքացիների 43 տոկոսը գտնում է, որ 2010թ. համեմատությամբ այդ թիվը նվազել է մինչև 22 տոկոս:¹ Ի՞նչ զարմանալի բան կա այստեղ: Նույն TI զեկույցում նշված է, որ կաշառակերությունն ամենից շատ հարվածում է բնակչության աղքատ խավերին: Բայց տարիմաստությունն այն է, որ որքան ցածր է եկամուտը, այնքան ավելի հաճախ է շարքային հայր ստիպված լինում կաշառել զանազան ծառայություններին: Նկատի ունենալով, թե ինչպիսի աղետաբեր արագությամբ է կյանքը թանկանում Գայաստանում, զար-

¹ “Голос Армении”, 14 декабря 2010 года.

մանալի չէ, որ շարքային հայերի մեծամասնության մոտ այլևս փող չի մնացել... նույնիսկ կաշառքի համար: Իսկ «Ռոմիր» ռուսաստանյան անկախ հետազոտական հոլդինգի կողմից Հայաստանում անցկացված սոցիոլոգիական հարցումները ցույց են տվել. հարցվածների կեսը գտնում է, որ վերջին երեք տարիներին մեզանում կոռուպցիայի մակարդակը բարձրացել է, և մարդկանց միայն 15 տոկոսն է կարծում, թե նկատվում է նվազեցման միտում: Մնացած 35 տոկոսը համոզված է, որ կոռուպցիան մնացել է նույն մակարդակին: Հարցվածների 53 տոկոսը (2009թ. այս ցուցանիշը ցածր էր՝ 48 տոկոս) գտնում է, որ կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկած քայլերն անարդյունավետ են. ֆինանսական միջոցներ շատ են ծախսվում, իսկ օգուտն աննշան է:¹

Զննարկելով այս պրոբլեմը, անխոհեմ կլիներ անտեսել զարգացած երկրների՝ կոռուպցիայի դեմ պայքարի փորձից բխող դասերը: Այդ փորձը վկայում է, որ Արևմուտքի երկրներում հաջողվել է նվազեցնել կոռուպցիայի մասշտաբները՝ փոխելով հասարակության, նրա տարբեր խավերի վերաբերմունքն այդ երկրներում Յանուսի նկատմամբ: Սոցիալական վերաբերմունքի փոփոխությունը հենց այն է, ինչը առանձին երկրներում ակտիվացրել է պայքարը կոռուպցիայի դեմ: Թեև, ինչպես վկայում են «Համաշխարհային կոռուպցիայի բարոմետր-2010» հետազոտության արդյունքները, որն անցկացվել է Transparency International միջազգային կազմակերպության կողմից, Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրներում նկատվում է կոռուպցիայի հասարակական ընկալման փոփոխության միտում: Համապատասխանաբար՝ հարցվածների 73 և 67 տոկոսը գտնում է, որ վերջին երեք տարիներին աճել է կոռուպցիայի մակարդակը: Չնայած դրան՝ հարցումը ցույց է տվել, որ յուրաքանչյուր տասը հարցվածից յոթը պատրաստ է հայտնել՝ տեղեկացնել կոռուպցիայի փաստերի մասին:² Դա այն է, ինչը հայ հասարակությանն այսօր պակասում է:

Միաժամանակ, Արևմուտքի փորձից բխող դասերից մեկն էլ այն է, որ կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրերում հարկավոր է հաշվի առնել անձնական շահը, նրա ինստիտուցիոնալացման անհրաժեշտությունը: Առանցքային միտքն այն է, որ ազատ շուկայական տնտեսութ-

¹ "Голос Армении", 14 декабря 2010 года.

² Նույն տեղում:

յուն ունեցող հասարակության մեջ, որտեղ հստակ սահմանված են և պաշտպանվում են սեփականության իրավունքները, իրականացվում է առողջ տնտեսական քաղաքականություն, անձնական շահի, օգուտի մոտիվները կարող են նշանակալի դեր խաղալ կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացման գործում: Նախևառաջ, անձնական շահի մոտիվը կարող է սեփականատերերին ստիպել պաշտպանելու իրենց սեփականությունը: Սեփականատերերը պարզապես կարող են սահմանել տնտեսական հանցագործությունների մեջ կասկածյալ անձանց վերաբերող բացահայտիչ տեղեկությունների համար՝ շահագրգռված լինելով, որ երկրում լինեն ամուր և արդյունավետ պետական ինստիտուտներ, այդ թվում՝ ոստիկանություն, դատարաններ և կառավարություն, որոնք ունակ են պաշտպանելու քաղաքացիների շահերը և իրավունքները: Նույն մոտիվը քաղաքացիներին կարող է ստիպել աջակցելու իշխանություններին՝ հանցագործների հայտնաբերման գործում:

Ակներև է, որ հասարակության մեջ, որտեղ պետությունը ժողովրդին է ծառայում, քաղաքացիների անձնական շահը դառնում է համակարգային կոռուպցիային դիմակայող, պետության հակակոռուպցիոն քաղաքականությանը հասարակական աջակցություն ապահովող կարևորագույն գործոն: Եվ ընդհակառակը, երբ պետությունը հակադրված է հասարակությանը, անձնական շահը գործում է ընդդեմ պետության, և այդ ժամանակ կոռուպցիայի դեմ պայքարի բոլոր ջանքերն իզուր են:

Հայաստանում պաշտոնական ինստիտուտների արտաքին թաղանթի ներսում քողարկվում են միջանձնային հարաբերությունների տեղական ցանցերը, որոնք հիմնված են մասնավոր, ոչ պաշտոնական արժեքների վրա: Այդ մոդելը նախադրյալներ է ստեղծում համակարգային կոռուպցիայի համար: Անհրաժեշտ մարդուն կաշառելը, որն իր ազդեցությամբ կարևորվում է այդօրինակ ցանցերի անդամների համար, հաճախ նշանակում է ողջ ինստիտուտի նկատմամբ վերահսկողության սահմանում:

Կոռուպցիայի վերը նշված մոդելը նորություն չէ հետխորհրդային շրջանի համար: 1970-1980 թվականների իրական մեխանիզմների գիտակները նշում են, որ նախկին ԽՍՀՄ-ի որոշ տարածաշրջաններում ինչ-որ աննշան մի հաշվապահ կարող էր հայտնվել կոռուպցիայի ցանցի կենտրոնում, ցանց, որով կարելի էր ծածկել վիթխարի տնտե-

սական տարածք: Սակայն, անտարակույս, նման հաշվապահները չէին կարող երազել ողջ պետության սեփականչնորհման մասին, որի շեմին հայտնվեց խորհրդային երկիրը 1980-ականների վերջերին: Այս շրջանում մասնավոր շահերի գործողությունների տարածքի ընդլայնումը տեղի էր ունենում վստահության տարածքի մեջ ներառնված «օղակների» թվի աճի հաշվին՝ «յուրայինների» երաշխավորությունների և երաշխիքների միջոցով:

Միջանձնային վստահության շղթաները, ընդարձակվելով և միահյուսվելով, կազմում էին բարդ կառուցվածքներ, որոնցում փոխադարձ վստահությունը պահպանվում էր խախտողների նկատմամբ կոլեկտիվ պատժամիջոցներով: Հարկ է նշել նաև քրեական բառապաշարից վերցված «հասկացությունների» (նուսերեն՝ «պոնյատիաների») դերը հարաբերությունների կարգավորման գործում:

Այնքան է, որ Հայաստանում առանձնապես ուժեղ են ոչ ֆորմալ օլիգարխիական կամ բյուրոկրատական կլանների դիրքերը: Դրանք, սովորաբար, կառուցվում են պատրոն-կլիենտ (իր գործերի վարումն ուրիշին հանձնած անձ - Մ.Գ.) հարաբերությունների, այսպես կոչված՝ կլիենտելիզմի սկզբունքի վրա: Հայաստանաբնակ հայերի մեծամասնությունը գտնում է, որ սոցիալական, քաղաքական կյանքում ինչ-որ բանի հասնելու լավագույն միջոցն անձնական կապերն են: Այս երևույթն առկա է բոլոր հետխորհրդային հասարակություններում: 1990-ականների վերջերին Ռուսաստանում անցկացված սոցիոլոգիական հետազոտությունները ցույց են տվել, որ հարցվածների 84 տոկոսը կողմնորոշված է դեպի անձնական կապերը:¹ 2004թ. նույնաբնույթ արդյունքներ են գրանցվել ՌԳԱ Սոցիոլոգիայի ինստիտուտի կողմից անցկացված հարցման ընթացքում: Այն հարցին, թե «ի՞նչն է օգնում գտնել լավ վարձատրվող աշխատանք», հարցվածների 66,7 տոկոսը վկայակոչել է անձնական կապերը և ծանոթությունը:² Սակայն օգտաշահ կապերն ու ծանոթությունները ակտիվորեն օգտագործվում են միայն «որոշակի սոցիալական շրջանակներում» /ընդգրկում է բնակչության 10-14 տոկոսը:³ Խոսքն, իհարկե, պետական մարմիններում, բիզնեսում ազդեցիկ մարդկանց հետ անձնական կապերի ցանցի մասին է:

¹ Афанасьев М. Клиентелизм и действительность. М., 2000, стр. 9.

² Российская идентичность в условиях трансформации. М.: Наука, 2005, стр.63.

³ Նույն տեղում:

Հետխորհրդային հայկական կլիենտելիզմը ընդհանրության եզրեր ունի չինական ընտանեկանության (գուանսի) և լատինոամերիկյան ֆամիլիզմի հետ, այն բավարարում է վստահության պահանջումնը:¹ Դա հնարավոր է առավելապես նեղ շրջանակներում, այն էլ միայն «յուրայինների» համար՝ ոչ ֆորմալ անձնական կապերի, ընտանեկան-ազգակցական հարաբերությունների հիման վրա: Հիշեցնենք, որ Մ.Կաստելսը գրել է տայվանյան և հոնկոնգյան ընտանեկան բիզնեսի ցանցային կառուցվածքի մասին՝ այն համարելով նոր խոսք ձեռնարկատիրության կապիտալիստական կազմակերպման բնագավառում:²

Նկատենք, որ կլիենտելիզմի տարատեսակություններից է նեոպատրիմոնիալիզմը: Հայտնի հետազոտող Շ.Այզենշտադտը զարգացրել է նեոպատրիմոնիալիզմի կոնցեպցիան՝ հենվելով 20-րդ դարի խոշորագույն սոցիոլոգ Մաքս Վեբերի տեսական ժառանգության վրա:

Patrimonism տերմինի ստուգաբանությունից պարզվում է, որ այն ծագել է Օգոստինոս կայսեր կառավարաման օրոք և նշանակում էր սկզբնապես կայսեր մասնավոր գանձարան, որը նա ազատ, ինքնակամ տնօրինում էր՝ հաշվի չնստելով ծերակույտի հետ: Մ.Վեբերի մոտ պատրիմոնիալիզմը հանդես է գալիս որպես ավանդական տիրապետության տեսակ՝ կառավարման իր հատուկ ապարատով, որն ամբողջովին գտնվում է բարձրագույն իշխանության առաջին դեմքի տնօրինության ներքո: Ընդ որում, «ավատատիրություն» տերմինը Մ.Վեբերը օգտագործում է նեղ իմաստով՝ որպես պատրիմոնիալ տիրապետության տարատեսակություն: «... Նահապետական պատրիմոնիալիզմը, - նշում են հայ հետազոտողներ Գ.Գրիգորյանը և Գ.Գրիգորյանցը, - մեկ անձի տիրապետությունն է: Այդ իսկ պատճառով վերջինս «չինովնիկության»՝ որպես տիրապետության իրականացման համար առանձնահատուկ խմբի մշտական կարիքն ունի»:³ Գլխավորը, որով տարբերվում են պատրիմոնիալ հարաբերություններն այն է, որ դրանցում վճռորոշ նշանակություն են ձեռք բերում հավատարմության և նվիրվածության սկզբունքների վրա կառուցված ոչ պաշտոնական անձնական հարաբերությունները: Դրանց խտացումը «տանիքն» է, որը

¹ Афанасьев М. Клиентелизм и действительность. М., 2000, стр. 9.

² Кастельс М. Информационная эпоха: экономика, общество и культура. М.: ГУ ВШЭ, 2000, стр. 179-180.

³ Վեբեր Մ. Սոցիալական գործողության ըմբռնումը, Երևան, Ձանգակ-97, 2005, էջ 35:

խորհրդանշում է հիերարխիական սանդուղքի տարբեր աստիճաններում ամրակայված և գործող հովանավորչական հարաբերությունների համակարգը՝ հիմնված ազգակցական, հայրենակցական և այլ սկզբունքների վրա: Ռուս-ամերիկյան սոցիոլոգ Վ.Շլյապենտոխի կարծիքով՝ ցանկացած հետխորհրդային հասարակության մեջ կարելի է հայտնաբերել բազմաթիվ ընդհանրություններ վաղ ավատատիրության հետ: Ինչպես և միջնադարյան Եվրոպայում, շարունակում է իր միտքը անվանի սոցիոլոգը, ներկայիս Ռուսաստանում հանրային և մասնավոր ոլորտների միջև սահմանները լրոզված են կամ ընդհանրապես գոյություն չունեն: Իսկ իշխանությունն ու սեփականությունը ոչ թե տարբաժանված, այլ սերտանված են: Միջնադարյան բարոնների նման նորընծա բյուրոկրատները՝ իշխանության բոլոր մակարդակներում իրենց պաշտոնական լծակները օգտագործում են սեփականության նկատմամբ վերահսկողություն սահմանելու համար: Հասարակական, պետական կյանքում անձնական, ոչ ֆորմալ կապերն ավելի նշանակալի դերատարություն ունեն, քան այն կապերը, որոնք հիմնված են տնտեսական և քաղաքական կառուցվածքներում մարդկանց պաշտոնական կարգավիճակների վրա: Վ.Շլյապենտոխի դիպուկ արտահայտությամբ, առավել մեծ ուժ ունեն Ռուսաստանում ոչ այնքան պետական գործիչները, որոնք ընտրվել են ժողովրդի կողմից, որքան այն մարդիկ, որոնք մտնում են ՌԴ նախագահի մերձակա շրջապատի մեջ:¹

Նույն պրոբլեմին անդրադարձել է նաև ռուս-ամերիկյան սոցիոլոգ, Չիկագոյի համալսարանի պրոֆեսոր Գ.Դերլուզյանը, որն առաջադրել է նորահայրենակալվածքային (նեովոտչինային) կառավարման մոդելի գաղափարը: Յուրովի մեկնաբանելով Շ.Այզենշտադտի վերոնշյալ կոնցեպցիան՝ Դերլուզյանը նեոպատրիմոնիալիզմը բնութագրում է որպես նորահայրենակալվածքային կառավարման ձև, որի տակ հասկանում է այնպիսի կառավարումը, որը հենվում է «ընտանիքի» և կլանային-կորպորատիվ կառուցվածքների շահերը սպասարկող մեխանիզմների վրա:² Փաստորեն, այդ համակարգն ավատատիրական հարաբերությունների կերպափոխված տեսակն է, երբ միայն երկրի նախագահն է

¹Shlapentokh V. Early Feudalism – The Best Paraller for Contemporary Russia and Europe – Europe Asia Studies. Formerly Soviet Studies, 1996, v. 48, № 3.

²Տես, Дерлугян Г. Кризисы нео-вотчинного правления. – В сб.: Армянский транзит. Проблемы и перспективы социальной трансформации. – Ереван, 2009, с. 46.

իրապես ձևավորում կառավարչական ընտրանին՝ իր կլանի կամ նրան մոտ կանգնած մարդկանց նշանակելով եկամտաբեր պաշտոնների՝ փոխարենը նրանցից ակնկալելով քաղաքական աջակցություն և տեղերում հավաքված հարկերից և եկամուտներից բաժնեմաս: Նրանք, ովքեր ստանում են եկամտաբեր պաշտոններ, աստիճանաբար դրանք վերածում են կիսաավատատիրական «բաժնեկալվածքների»: Այստեղից էլ կոռուպցիան և չինովնիկական կամայականությունները, որոնք հետխորհրդային հասարակությունների քաղաքական համակարգերի բնորոշ գծերն են: Այս ամենը համոզիչ կերպով վկայում է կոռուպցիոն մեթոդի թերությունների մասին:¹

Դնելով հետխորհրդային երկրներում հասարակական և քաղաքական հարաբերությունների, սեփականության և իրավունքի փոխգործողության պրոբլեմը՝ ականավոր իրավագետ, ՌԳԱ ակադեմիկոս Վ.Ներսեսյանցը դրա էությունը տեսնում է այնպիսի սեփականության ստեղծման մեջ, որը «... դեռևս ազատ չէ իշխանությունից և այնպիսի իշխանությունից, որը դեռևս ազատ չէ սեփականությունից: Սոցիալ-պատմական կտրվածքով՝ նման իրադրությունը բնութագրական է ավատական փուլի համար, երբ տնտեսական և քաղաքական երևույթներն ու հարաբերություններն իրենց անզարգացածության շնորհիվ դեռևս չեն առանձնացել մեկը մյուսից և չեն կազմավորվել իբրև հարաբերականորեն իրարից անկախ, ինքնուրույն կեցության երկու տարբեր ոլորտներ: Իշխանության և սեփականության, քաղաքականության և տնտեսության սիմբիոզը նշանակում է, որ հասարակական-քաղաքական ամբողջությունը դեռևս չի հասունացել քաղաքացիական հասարակության և քաղաքական պետության տարբերակման համար»:² Այնուհետև իրավագետ-փիլիսոփան առանձնացնում է նորավատատիրության հետևյալ հատկանիշները. օրենքի դերի արժեզրկումը, ընդհանուր իրավական սկզբունքների և նորմերի անգործությունը, իրավական տարբեր ակտերի միջև անհամաձայնություններն ու հակասություններն, իրավական կարգավորման խայտաբղետությունն ու քառսայնությունը, տարբեր իրավագործությունների և իրավական կարգավիճակների կորպորատիվ, դասախաձային բնույթը: Ամենակարևորներից հատուկ նշում է և այն, որ Ռուսաստանի նոր

¹ Дерлугян Г. Кризисы нео-вотчинного правления. – В сб.: Армянский транзит. Проблемы и перспективы социальной трансформации. – Ереван, 2009, с. 47-48.

² Нерсисянц В.С. Философия права. – М.: Изд-во Норма, 2001, с. 143.

սահմանադրության մեջ ամրագրված մարդու և քաղաքացու համընդհանուր իրավունքների փոխարեն և համընդհանուր իրավահավասարության սկզբունքին հակառակ ամենօրյա, իրական կյանքում գերիշխում է կորպորատիվիզմի ոգին, գործում են իշխանությունների կողմից նորմատիվորեն սահմանված իրավունք-արտոնություններ, ամենատարբեր իրավական բացառություններ և արտոնություններ՝ հոգուտ առանձին անձանց, խմբերի, մասնագիտությունների, սոցիալական խավերի, վարչական տարածքների և այլնի:¹

Հայաստանին սպառնացող վտանգները շատ են, սակայն ընտրություն հնարավոր է կատարել միայն երկրի արդիականացման ազգային-ժողովրդավարական նախագծի և խորացող լճացման, ավելի խիստ՝ ազգային ինքնասպանության միջև: Հայաստանը կա՛մ կդառնա զարգացած շուկայական տնտեսությամբ և ժողովրդավարական ինստիտուտներով ժամանակակից ազգային պետություն, կա՛ն այն չի լինի Այսրկովկասի նշանակալի տարածաշրջանային և սոցիալ-քաղաքական սուբյեկտ:²

Ազգային-ժողովրդավարական արդիականացման նախագծի իրականացման բանալին կա՛մ մեթոդը ժողովրդավարությունն է՝ սոցիալական արդարության և հայրենասիրության հետ միասին: Դրա համար, նախևառաջ, անհրաժեշտ է.

1. ամրապնդել զսպումների և հակակշիռների համակարգը պետական իշխանության նյութերի միջև, բարձրացնել նրանց օրգանական փոխգործակցության արդյունավետությունը,

2. ապահովել օրենքի գերակայությունը. օրենքը վեր է ցանկացած հեղինակությունից, ցանկացած պետական այրից, և նրա մեկնաբանությունը տրվում է միայն անկախ դատարանի կողմից,

3. արդիականացնել Հայաստանի գործադիր իշխանության կառուցվածքը՝ պետական կարևոր որոշումների մշակման գործընթացին հասարակության ակտիվ մասնակցության ապահովման նպատակով,

4. ընդլայնել իշխանության ներկայացուցչական մարմինների լիազորությունները,

5. մշակել պետական կառավարման որակապես նոր մոդել՝ կորպորատիվ կառավարման արդյունավետության, թափանցիկության, հա-

¹Нерсесянц В.С. Философия права. – М.: Изд-во Норма, 2001, с.144.
²Հարությունյան Մանուկ Ա. Հայաստանի արդիականացման ինստիտուցիոնալ խոչընդոտները, «վեմ» հանդես, 2012, քիվ 1 /37/ հունվար-մարտ:

սարակութեանը պարբերական հաշվետվության սկզբունքներով և մեխանիզմներով՝ չանտեսելով աշխարհի զարգացած երկրների առաջավոր փորձը,

6. ստեղծել պայմաններ քաղաքական մրցակցության որակական աճի համար. ասոցիացիաների իրական ազատությունը պետք է ուղի հարթի քաղաքական կուսակցությունների լիիրավ կայացման համար: Ընդամին նրանք պետք է հնարավորություն ունենա պայքարելու քաղաքական իշխանության իրականացման իրավունքը նվաճելու համար՝ հասարակությանը առաջադրելով համազգային ծրագրեր և հանրային պաշտոններ զբաղեցնելու համար արժանի լիդերներ,

7. արմատապես բարեփոխել իրավակիրառական պրակտիկան և ամրապնդել ժողովրդավարական սկզբունքների վրա հիմնված իրավակարգը,

8. ապահովել իշխանության փոխելիության, ազատ ընտրությունների կազմակերպման և անցկացման սկզբունքների- հետևողական իրականացումը: Այս տեսակետից ընտրություններն ազատ են ճանաչվում ոչ միայն այն պատճառով, որ ձայների հաշվարկման ժամանակ մեքենայություններ չեն եղել, այլև այն բանի շնորհիվ, որ իշխանության զլուխ կանգնած քաղաքական ուժերն իրապես զրկված են իրենց դիրքն ու լծակներն օգտագործելու հնարավորություններից: Միայն այս պայմաններում իշխանությունների փոխելիությունը կարող է դառնալ քաղաքական իրականություն կամ ազգային հիմնարար արժեք,

9. ամրապնդել հայ ժողովրդի միասնությունն ու համերաշխությունը, իրական համաժողովրդավարական կոնսենսուսն անհնար է առանց ժողովրդավարության և հայրենասիրության արժեքների,

10. որակապես բարձրացնել քաղաքացիական հասարակության ինստիտուտների հեղինակությունը, պրակտիկ գործունեության և պատասխանատվության ոլորտը՝ դրանք դարձնելու համար մասնակցային ժողովրդավարության կարևորագույն ինստիտուտներ,

11. աջակցել ԶԼՄ-ների ազատության և սոցիալական պատասխանատվության ներդաշնակ զուգորդմանը:

Հայաստանի արդիականացումը պահանջում է, որպեսզի հետևողականորեն պահպանվեն՝ իշխանությունների տարանջատման սկզբունքը, «խաղի ժողովրդավարական կանոնները», որոնք ամրագրված են Հայաստանի սահմանադրության մեջ: Այս տեսակետից, իշխանության ցանկացած գործողություն, որն ուղղակիորեն խախ-

տում է գործող օրենսդրությունը, պետք է ճանաչվի ապօրինի: Օրենսդրության ցանկացած կամայական մեկնաբանությունը՝ դատարանի կամ քննության վրա ճնշում գործադրելու նպատակով, ևս պետք է ճանաչվի հակաօրինական: Անկասկած, դա, նույնպես, կնպաստի արդարադատության ամրապնդմանը, նրա նկատմամբ հասարակական վստահության աճին: Գործում արդարադատությունը՝ բյուրոկրատիզմի, կոռուպցիայի և կլիեմտելիզմի դեմ պայքարի արդյունավետ ինստիտուցիոնալ մեխանիզմներից մեկն է: Այդ պայքարի մեջ պետք է ներգրավվեն օրենքի շրջանակներում գործող հանրային ինստիտուտները, որոնք վայելում են քաղաքացիների մեծամասնության վստահությունը: Դա հնարավոր կդառնա միայն այն դեպքում, եթե հանրային ինստիտուտները սկսեն գործնականում իրականացնել քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության՝ օրենքով վերապահված իրենց գործառույթները:

Արդիականացման վերոնշյալ ինստիտուցիոնալ խոչընդոտներից ձեռքազատվելու գործում անգնահատելի է քաղաքական և տնտեսական մրցակցության դերն ու նշանակությունը: Հայտնի է, որ մրցակցային շուկան գործում է միայն այն ժամանակ, երբ սեփականության իրավունքը պաշտպանված է օրենքով և ինստիտուտներով, որոնք ապահովում են նրա բնական գործառնությունը: Ընդսմին մրցակցային շուկա ունեցող հասարակության մեջ, որտեղ հետևողականորեն պաշտպանվում են սեփականության իրավունքները, իրականացվում է նորացումային քաղաքականություն, անձնական շահի, օգուտի մոտիվները կարող են նշանակալի դեր խաղալ ոչ միայն մրցակցության աճի, այլև կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացման գործում: Անտարակույս, իրավացի է ՌԴ նախագահ Վ.Պուտինը, երբ նշում է, որ «Քաղաքական մրցակցությունը ժողովրդավարության նյարդն է, նրա շարժիչ ուժը: Եթե այդպիսի ժողովրդավարությունն արտացոլում է սոցիալական խմբերի իրական շահերը, ապա այն բազմակիորեն ուժեղացնում է պետության «հզորությունը տնտեսության զարգացման ապահովման, սոցիալական նախագծերին ուղղված ռեսուրսների համախմբման մեջ: Քաղաքացիական արդարության և պաշտպանվածության ապահովման մեջ»:¹

¹ Путин В.В. Демократия и качество государства. "КоммерсантЪ", 06.02.2012.

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում մրցակցության Ի.Շումպետերի կոնցեպցիան: Ըստ Շումպետերի՝ մրցակցությունն անհամեմատ ավելի կարևոր ժողովրդավարական ինստիտուտ է, քան քաղաքացիների մասնակցությունը կամ զարգացած քաղաքացիական հասարակությունը: Մասնակցությունը հասարակական և քաղաքական կյանքին՝ քաղաքացիների անկապտելի իրավունքն է, որից շարքային քաղաքացիները կարող են նաև չօգտվել: Քաղաքական կյանքին ակտիվորեն մասնակցելուն անպատրաստ քաղաքացիները, իհարկե, չեն կարող մասնագիտորեն արժեքավոր դատողություններ անել սոցիալ-տնտեսական, քաղաքական պրոբլեմների մասին: Թերևս հենց դրա համար էլ անհրաժեշտ են կուսակցությունները:¹

Ներկայումս լուրջ պահանջներ են առաջադրվում Հայաստանի բոլոր քաղաքական կուսակցություններին: Թեև նրանք դանդաղորեն են հասունանում և ծավալում ներկուսակցական պայքար, վաղ թե ուշ, այդ գործընթացը կհանգեցնի խելամիտ և կշռադատված պայաներիզի, այսինքն՝ իսկական կուսակցական աշխատանքի ի հայտ գալուն: Եվ որպես քաղաքական մրցակցության հաջողության վկայություն՝ կուսակցությունները ոչ միայն տեղեր կստանան Ազգային ժողովում, այլ նաև կհավակնեն Հայաստանի նախագահի պաշտոնին: Հայաստանի, ինչպես նաև մյուս հետխորհրդային հասարակությունների համար, դա ավելի շուտ՝ հեռավոր իդեալ է: Սակայն անվիճելի է, որ այսօր Հայաստանի արդիականացման նոր նախագծի շուրջ բանավեճերը և քաղաքական քննարկումները կարող են քաղաքացիական հասարակությունը և պետությունը պաշտպանել հետագա լճացումից և քաղաքական-կուսակցական մեռնաշնորհից:

Այսպիսով, տնտեսական և քաղաքական մրցակցությունը՝ իշխանության բաժանման, օրենքի գերակայության, իշխանության փոխելիության, ազատ ընտրությունների և ԶԼՄ-ների ազատության հետ միասին կազմում է արդիականացման ինստիտուցիոնալ խոչընդոտների հաղթահարման գործընթացի կենդանի բովանդակությունը:

Հասունացել է ռազմավարական շրջադարձը դեպի «ներքևից» արդիականացման ազգային-ժողովրդավարական մոդելը, որի կարգախոսները պետք է դառնան ժողովրդավարությունը, արդարությունը և հայ-

¹ Шумпетер И. Капитализм, социализм и демократия. – М., Экономика, 1995, с. 354-358.

րենասիրությունը: Հայաստանյաց ժողովրդին, նրա պետականությանն անհրաժեշտ է ժողովրդավարության և արդարության հուսադրող հեռանկար, նոր քաղաքական կողմնորոշիչներ, իշխանության նոր բովանդակություն և հռետորաբանություն: Երկրի բոլոր պատասխանատու, հայրենասիրական և ժողովրդավարական ուժերի միջև համախմբող երկխոսություն, որի չափանիշը նախաձեռնության և քաղաքական պատասխանատվության աճն է: Առանց այդպիսի շրջադարձի՝ Հայաստանը չունի գոյատևման և զարգացման պատմական հնարավորություն գլոբալ մրցակցության պայմաններում: Ազգային ներուժի լիակատար օգտագործում՝ ահա մոտակա տասնամյակում Հայաստանի զարգացման գլխավոր բանաձևը: Իսկ դրա համար պահանջվում է վճռականորեն բարձրացնել իշխանության ճյուղերի, բիզնես-ընտրանու, կուսակցությունների, ակադեմիական և ճյուղային գիտության և քաղաքացիական հասարակության համագործակցության և պատասխանատվության մակարդակը: Ուստի պետության, բիզնեսի, գիտության և քաղաքացիական հասարակության միջև սոցիալական պայմանագրի կամ դաշինքի հարցն ավելի ու ավելի է տեղափոխվում ազգային օրակարգի կենտրոն: